Արձանագրություն N 8

Երևան քաղաքի ենթակայությամբ գործող մանկապարտեզների կարիքների համար կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերման ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի գանահատման նիստի

ք.Երևան

26.11.2019թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Լևոնյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Աբգարյան /գնահատող/, Կ. Քոթանջյան /գնահատող/, Ն. Ոսկանյան /բացող/, Ն. Նազարյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և 1-ին տեղեր զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Լ. Լևոնյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող /հրավերում նշված չափաբաժինների մասով/ հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերի պահանջներին:

1.2 Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած հետևյալ մասնակիցների կողմից սահմանված ժամկետում ներկայացված իրենց որակավորումը հավաստող հրավերով պահանջվող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	«Ֆոտոն» ՍՊԸ
2	«ԶԵՅԹՈՒՆ ՍՎԻԹ» ՍՊԸ
3	«Գալիմա» ՍՊԸ
4	«Սավա»ՍՊԸ
5	«ՍՅՌՈՒՄԱ» ՍՊԸ

1.3 Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած հետևյալ մասնակիցների կողմից ներկայացված հատերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

- **«Ցիկլոիդ» ՍՊԸ**- 19-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում առկա է անհամապատասխանություն հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրին, մասնավորապես բնութագրում բացակայում է «խոշոր տերևներով» բառերը,
- **«ԲԻԳ ԼԱՅՖ» ՍՊԸ**- ներկայացված հայտում բացակայում է նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը և պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը,
- **«Սևանի հացի գործարան» ՓԲԸ**- ներկայացված հայտում բացակայում են ներկայացված բոլոր տրանսպորտային միջոցների տեխնիկական և սանիտարական անձնագրերը,
- **«ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ և «ԳԱՐԴՄԱՆ» ՍՊԸ Կոնսորցիում**- ներկայացված հավելված 3.1-ում լրացված չէ ապրանքային նշան և արտադրողի անվանում սյունակները /կամ լրացված են ոչ ճիշտ/, ինչպես նաև անհրաժեշտ է հստակեցնել ծագման երկիրը: Բացակայում է **59-րդ, 72-74-րդ** չափաբաժինների մասով ներկայացված տրանսպորտային միջոցների սատիտարական անձնագրերը,

-«Դաննիկ» ՍՊԸ- մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել իր որակավորումը հավաստող հրավերով պահանջվող փաստաթղթերը:

1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ գնահատման նիստը կասեցնել և ծանուցել 1.3 կետում նշված մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում /երեք աշխատանքային օր/ շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Անհամապատասխանություններն շտկելու դեպքում ներկայացված հայտերը կգնահատվել բավարար, հակառակ դեպքում կգնահատվեն անբավարար և կմերժվեն՝ համաձայն Կարգի 47-րդ կետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Լ. Լևոնյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 2-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Լ. Լևոնյան

Անդամներ՝ ---------- Ն. Նազարյան

---------- Մ. Աբգարյան

---------- Կ. Քոթանջյան

---------- Ն. Ոսկանյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան